



ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Դեկտեմբերի 13—15-ին Երևանում, Վալերի Բրյուսովի անունը կրող Ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի նախաձեռնությամբ, անցկացվեցին Բրյուսովյան առաջին ընթերցումները, նվիրված ողջ աշխարհի բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Վալերի Բրյուսովի կյանքի, գրական և հասարակական գործունեության, ինչպես նաև հայ մշակույթի հետ նրա ունեցած կապերի լուսաբանմանը:

Վալերի Բրյուսովը առաջիններից մեկն էր, որն անգնահատելի գործ է կատարել հայ գրականությունն ու բանաստեղծությունը թարգմանելու և ժողովրդականացնելու ուղղությամբ:

1916 թվականի վերջերին լույս տեսավ ռուսական պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ժողովածուն: Նրա թարգմանությունների մեծ մասը պատկանում է Վ. Բրյուսովին:

Վ. Բրյուսովը միաժամանակ ջերմորեն ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը:

«... Հայաստանի ուսումնասիրության մեջ ես գտա հոգևոր ուրախությունների մի անսպառ աղբյուր, ու իբրև պատմաբան, իբրև գիտության մարդ, ես Հայաստանի պատմություն մեջ տեսա մի ուրույն աշխարհ, որտեղ հազարավոր խիստ արժեքավոր, բարդ հարցեր արծարծում էին գիտական հետաքրքրություն, իսկ իբրև բանաստեղծ ու արվեստագետ, ես Հայաստանի պոեզիայում տեսա գեղեցկության նույնպիսի մի ուրույն

աշխարհ, մինչ այդ ինձ անհայտ մի նոր տիեզերք, որտեղ փայլում ու լուսավորում էին գեղարվեստական իսկական ստեղծագործության վեհ կերտվածքներ...»

Ես կարող էի գնահատել, թե ինչպիսի հրակայական նշանակություն ունի հայ աշխարհը ամբողջ կուլտուրական մարդկության համար...»

Ես համոզվեցի, որ հայերի ճակատագրին կցված է ընդհանուր պատմության ամենաուշագրավ էջերից մեկը, որը նոր լույսով է լուսավորում պատմագիտության բազմաթիվ հարցերը...»

Մենք՝ ողուներս պետք է իմանանք հայոց պատմությունը՝ շխոսելով այն մասին՝ որ բոլոր կրթված մարդիկ պետք է ճանաչեն Հայաստանը:

Դեկտեմբերի 13-ին, Երևանի Պետական համալսարանի մեծ դահլիճում, տեղի ունեցավ Բրյուսովյան առաջին ընթերցումների հանդիսավոր բացումը:

Երեկոյին նվիրված հանդիսության իրենց սրտագին մասնակցությունն էին քերել Երևանի և Սովետական Միության տարբեր վայրերի անվանի գիտնականներ, որոնք զբաղվում են Բրյուսովի գրական ժառանգության գիտական ուսումնասիրությամբ:

Ներածական խոսքով հանդես եկավ ինստիտուտի ողուաց գրականության ամբիոնի վարիչ, դոցենտ Կ. Ալվալյանը:

Ապա լսվեցին երկու զեկուցումներ: Բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Լ. Ղանալտեյանը «Հայ պոեզիան և Վալերի

Բրյուսովը թեմայով իր զեկուցման մեջ ուշագրավ տվյալներ բերեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության, նրա գրական հարուստ կուլտուրայի նկատմամբ Բրյուսովի ունեցած խոր հետաքրքրության, ժամանակի հայ բանաստեղծների՝ մասնավորապես Շովհանեան Թումանյանի հետ նրա ունեցած բարեկամական կապերի մասին, նշեց այն անգնահատելի ծառայությունները, որ Բրյուսովը մատուցել է հայ պոեզիայի լավագույն նմուշները ուղիղ ընթերցողին իր կատարած թարգմանությունների միջոցով ներկայացնելու գործում:

Ներկաները խոր հետաքրքրությամբ ունկընդրեցին նաև «Համաշխարհային կուլտուրայի պրոբլեմները և Վ. Յա. Բրյուսովը» թեմայով զեկուցումը, որով հանդես եկավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Պ. Բերկովը:

Ապա ներկաները շերտորեն ընդունեցին պոետի եզրայր, սովետական ակադեմիայի հնագետ Ալեքսանդր Բրյուսովի ելույթը: Նա հետաքրքրական հուշեր պատմեց պոետի մասին:

Հուզիչ էին ինստիտուտի դասախոս Զ. Յասինսկայայի հիշողությունները Բրյուսովի մասին, որի սանն էր Գրական-գեղարվեստական ինստիտուտում սովորելու տարիներին:

Հաջորդ երեք նիստերում կլավեն ավելի քան տասը զեկուցումներ «Բրյուսովը հայ պոեզիայի թարգմանիչ», «Գորկին և Բրյուսովը», «Բրյուսովի պոեզիան հայ գրական քննադատության գնահատմամբ», «Բրյուսովը որպես գեղանկարիչ» և այլ թեմաներով:

Ընթերցումների մասնակիցները հետաքրքրությամբ են ծանոթանում ինստիտուտի Բրյուսովյան կաբինետում բացված ցուցահանդեսին:

